հուլիս, 2025

Թեստ աշխարհագրությունից

Հրահանգ

Ձեր առջև թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, ճիշտ ընկալեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և նոր միայն սկսեք աշխատանքը:

Թեստի վրա աշխատելիս կիրառեք կցված քարտեզները:

Նկատի ունեցեք, որ եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ նշեք նաև սխալ պատասխանը, ապա միավոր չեք վաստակի:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք գործածել ստեղնաշարի կոճակները:

- *Հարց ընտրովի պատասխաններով*

Հրահանգ

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ պատասխանի համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

- *Բաց առաջադրանք*

Հրահանգ

Ուշադիր ծանոթացեք տրված տեղեկատվությանը (տեքստ, լուսանկար, աղյուսակ, գրաֆիկ, դիագրամ, ֆիզիկական, ուրվագծային, տեղագրական քարտեզներ և այլն) և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է՝ ըստ կոնկրետ առաջադրանքի:

(1) 1. Ի՞նչ է արտացոլում տվյալ քարտեզը:



ա) Սեյսմիկ ակտիվության գոտիները,
բ) սառցադաշտային տարածքի բաշխումը,
գ) կենսաբազմազանության թեժ կետերը,
դ) ածխաթթու գազի էմիսիայի ինտենսիվությունը:

(1) 2. Ո՞րն է դիագրամի վրա պատկերված միտման հիմնական պատճառը:



ա) Կլիմայի գլոբալ փոփոխությունը,

բ) սեյսմիկ և հրաբխային ակտիվությունը,

գ) Էլ Նինյոյի և Լա Նինյայի գործողությունը,

դ) սալերի տեկտոնական շարժումը:

(1) 3. Համաձայն ո՞ր ինդեքսի են խմբավորված երկրները տվյալ քարտեզի վրա:



ա) Մարդկային զարգացման,

բ) Ջինիի,

գ) գլոբալացման,

դ) ազատական (լիբերալ) ժողովրդավարության:

(1) 4. Ո՞ր գույնով (թվանշանով) են նշված Պորտուգալիայի գաղութները քարտեզի վրա:



Գաղութային կայսրությունները 1800 թվականին

ա) Կանաչ (3),

բ) կապույտ (2),

գ) կարմիր (1),

դ) դեղին (4):

(1) 5. Վրաստանի հետ կապված ինչի՞ դինամիկան է արտացոլում տվյալ դիագրամը:



ա) Միգրացիոն սալդոյի բացարձակ արժեքի,
բ) արտերկրից դրամական փոխանցումների ծավալի,
գ) մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ԱՄՆ դոլարով,
դ) ներքին տեղահանված անձանց թվաքանակի:

(1) 6. Ո՞ր լուսանկարն է արվել Թրուսոյի պահպանվող լանդշաֆտի տարածքում:

ա) 	գ)
գ)	դ)

(1) 7. Ո՞ր սառցադաշտն է գտնվում Էնգուրի գետի ավազանում:

ա) Ադիշին,
բ) Թբիլիսան,
գ) Բուբան,
դ) Դևդորակը:

(1) 8. Թվարկածներից ո՞ր երկրում է գտնվում սխեմայի վրա պատկերված շենքը:



ա) Վրաստանում,
բ) Իսրայելում,
գ) Նոր Զելանդիայում,
դ) Կուբայում:

(1) 9. Ո՞ր պետության ազգային տոնն է հուլիսի 14-ը:

ա) Չինաստանի,

բ) Իսրայելի,

գ) Ֆրանսիայի,

դ) ԱՄՆ-ի:

(1) 10. Հորիզոնի հետ կապված ո՞ր պնդումն է *սխալ:*

ա) Հորիզոնը դիտորդի տեսադաշտում ընկնող Երկրի մակերևույթի տեսանելի մասն է,
բ) Տեսանելիության տրամագիծն աճում է դիտորդի ծովի մակարդակից դեպի վեր բարձրանալու համապատասխան,
գ) Տեսանելիության շառավիղն ավելի մեծ է օվկիանոսի ափին, քան նույն ափին գտնվող գագաթից,
դ) Լեռնային գետի հովտում հորիզոնն ավելի նեղ է, քան ծովի ափին:

(1) 11. Ի՞նչ են արտացոլում ներկայացված քարտեզները (լեգենդում նշված են Վրաստանի և նույն դիապազոնում գտնվող երկրների տվյալները, իսկ քարտեզի վրա՝ Վրաստանի և նույն դիապազոնում գտնվող երկրների ուրվագծերը):







ա) Գործազրկության մակարդակը,
բ) կրթության մակարդակը,
գ) գենդերային հավասարությունը,
դ) ժողովրդավարության որակը/մակարդակը:

(1) 12. Սև ծովի վերաբերյալ ո՞ր տեղեկությունն է ճիշտ:

ա) Ֆաունան ավելի հարուստ է զանազան ձկնատեսակներով, քան Միջերկրական ծովում,
բ) Մակերևութային ջրերի աղիության ցուցանիշն ավելի ցածր է, քան Բալթիկ ծովում,
գ) Ծովի ջրատարածքում ջուրը ոչ մի տեղ և երբեք չի սառչում, ելնելով մերձարևադարձային տեղադիրքից,
դ) Միջերկրական և Սև ծովերի միջև ջրափոխանակմանը խոչընդոտող գործոնը Բոսֆորի նեղուցի ստորջրյա ռելիեֆն է:

(1) 13. Ի՞նչ իզոգծեր են տարված տվյալ քարտեզի վրա:



ა) Իզոհիպս և իզոթերմ,
բ) իզոթերմ և իզոհիետ,
գ) իզոբաթ և իզոհիպս,
դ) իզոբար և իզոհիետ:

(1) 14. Ո՞ր դեպքում *չի օգտագործվում* թեոդոլիտը:

ա) Գեոդեզիական աշխատանքներում,
բ) տեղագրական պլանավորման համար,
գ) աշխարհագրական կոորդինատները որոշելիս,
դ) ապարների կառուցվածքը որոշելիս:

(1) 15. Ո՞ր երկրում են արվել այս լուսանկարները:

ա) Ավստրիայում,
բ) Ֆրանսիայում,
գ) Գերմանիայում,
դ) Շվեյցարիայում:

(1) 16. Աֆրիկայի քարտեզի վրա ո՞ր թվանշանով նշված վայրին է համապատասխանում տրված կլիմայական դիագրամը:



ա) 1

բ) 2

գ) 3

դ) 4

(1) 17. Թվարկվածներից ո՞ր պատասխանն է արտացոլում երկրաժամանակագրական հաջորդականությամբ (հնագույնից մինչև նորագույն) դասավորված երկրաբանական շերտերը (A, B, C) և D խզվածքը:



ա) A-B-C-D

բ) C-B-A-D

գ) C-B-D-A

դ) C-D-B-A

(1) 18. Ո՞ր ժողովրդագրական բուրգն է համապատասխանում Կատարի բնակչության կառուցվածքին:

ա)



բ)



գ)



դ)



K - հազար

(1) 19. Համաձայն տնտեսության ոլորտներում զբաղվածների բաշխման Կլարկ-Ֆիշերի մոդելի, ո՞ր թվանշանով նշված գրաֆիկն է արտացոլում արդյունաբերության մեջ զբաղվածների բաժինը:



ա) 1
բ) 2
գ) 3
դ) 4

(1) 20. Ի՞նչ է պատկերված արբանյակային լուսանկարում:



ա) Ցիկլոնը հյուսիսային կիսագնդում,
բ) հակացիկլոնը հյուսիսային կիսագնդում,
գ) ցիկլոնը հարավային կիսագնդում,
դ) հակացիկլոնը հարավային կիսագնդում:

(1) 21. Քարտեզը ցույց է տալիս 2050 թվականին բնակչության համար որոշակի ռեսուրսի հավանական դեֆիցիտի (պակասուրդ) կանխատեսումը: Թվարկածներից ո՞ր տեղեկությունն է պատկերված տվյալ քարտեզի վրա:



ա) Ջրային ռեսուրսներով ապահովման մակարդակը,

բ) առողջության առաջնային պահպանման մատչելիությունը,

գ) սննդամթերքով ապահովման մակարդակը,

դ) դպրոցական կրթության մատչելիությունը:

(1) 22. Ի՞նչ է արտացոլում տվյալ քարտեզը:



ա) անգլերենի իմացության մակարդակը,

բ) թափոնների վերամշակման մակարդակը,

գ) գրագիտության մակարդակը,

դ) շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակը:

(1) 23. Վերլուծե՛ք տեղեկատվությունը և որոշե՛ք, թե որ պնդումն է ճիշտ:



ա) Եվրոպայում նորածինների մոտավորապես 30%-ը ծնվում է Միացյալ Թագավորությունում,

բ) աշխարհում նորածինների մոտավորապես 10%-ը ծնվում է Չինաստանում,

գ) Ասիայում ծնելիության ընդհանուր գործակիցն ավելի բարձր է, քան Աֆրիկայում,

դ) Ասիայում ավելի քիչ երեխաներ են ծնվում, քան բոլոր մյուս երկներում:

(1) 24. Ի՞նչ է պատկերված առաջադրանքում տրված քարտեզի վրա:



ա) Ֆերտիլ (բեղմնունակ) տարիքի կանանցից ծնված երեխաների թիվը,

բ) նորածինների մահացության ցուցանիշը,

գ) տարբերությունը ծնելիության և մահացության գործակիցների միջև,

դ) կյանքի միջին տևողության գործակցի աճը:

(1) 25. 2024 թվականի Մյունխենի Անվտանգության ամենամյա համաժողովից առաջ, աշխարհի ամենախոշոր տնտեսությունն ունեցող 11 երկրներում անցկացվեց հարցում, որի նպատակն էր պարզել, թե քաղաքացիներն ինչն էին համարում հիմնական սպառնալիք իրենց երկրի համար: Ստորև ներկայացված են տարբեր երկրների քաղաքացիների կողմից նշված չորս հիմնական սպառնալիքները: Թվարկվածներից ո՞ր երկրում է նշվել Ռուսաստանը որպես գլխավոր սպառնալիք:



ա) Ֆրանսիայում,

բ) Միացյալ Թագավորությունում,

գ) Գերմանիայում,

դ) Բրազիլիայում:

(1) 26. Ինչի՞ հիման վրա են խմբավորված պետությունները տվյալ քարտեզի վրա:



ա) Նորածինների մահացության,

բ) կանանց համար առկա ապահով միջավայրի,

գ) մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալի,

դ) բնակչության շրջանում կրոնականության մակարդակի:

(1) 27. Թվարկածներից ո՞ր երկրների քաղաքացիներն են ավելի շատ գումար ծախսում բնակչության մեկ շնչի հաշվարկով:



ա) Չինաստանի,

բ) ԱՄՆ-ի,

գ) Միացյալ Թագավորության,

դ) Արաբական Միացյալ Էմիրությունների:

(1) 28. Ծովի մակարդակից ո՞ր կետն է գտնվում ավելի բարձր:



ა) A
ბ) B
გ) C
დ) D

(1) 29. Ո՞ր գետի անկումն է *ավելի պակաս:*



ա) Ճալա գետի (մդ. ჭალა),
բ) Խևի գետի (մդ. ხევი),
գ) Բարուլա գետի (մդ. ბარულა),
դ) Մարեթի գետի (մդ. მარეთი):

(1) 30. Մոտավորապես ի՞նչ ազիմուտով է գտնվում C կետից Մարեթի (მდ. მარეთი) գետի ակունքը:



ა) 30^0

ბ) 70^0

გ) 95^0

დ) 110^0

(1) 31. Քարտեզի վրա ո՞ր հատվածին է համապատասխանում տրված պրոֆիլը:





ա) AB

բ) CD

գ) EF

դ) GH

(2) 32. Միխեթի (მიხეთი) գյուղի դպրոցականները որոշեցին լողալ Սոթա գետում (მდ. სოთა): Լողալու վայրն ընտրելիս կարծիքները բաժանվեցին: Աշակերտներից ոմանք նախընտրեցին A կետը, իսկ մյուսները՝ B կետը: Բերե՛ք երկու փաստարկ, թե ինչու կնախընտրեիք A կետը:



Անցում առաջադրանքի՝ II էջին

რელიეფი

ძირითადი ჰორიზონტალები გავლებულია ყოველ 10 მეტრში

ა) ძირითადი ჰორიზონტალები
ბ) ძირითადი გამსხვილებული ჰორიზონტალები
გ) დამატებითი ჰორიზონტალები (ნახევრადჰორიზონტალები)
დ) ჰორიზონტალების სიმაღლის ნიშნულები მ-ში
ე) კალთის დახრის მაჩვენებლები (ბერგშტრიხები)



სიმაღლის ნიშნულები ა) ძირითადი ბ) ჩვეულებრივი



სიმაღლის ნიშნულები ორიენტირებით



ფლატე (ბექი) (16-ხრამის სიღრმე მ-ში)

ხრამები და ღარტაფები

მცენარეული საფარი და გრუნტი

წიწვოვანი ტყე

ფართოფოთლოვანი ტყე

შერეული ტყე

ხემცენარეების მახასიათებლები მ-ში: 20-საშუალო სიმაღლე, 0.20-მერქნის საშულო სისქე, 6-ხეებს შორის საშუალო მანძილი

ქვიშნარი

გაუვალი და ძნელადგასავლელი ჭაობები (0.7-ჭაობის სიღრმე მ-ში)

ადვილადგასავლელი ჭაობები

საგზაო ქსელი



გზატკეცილი
გაუმჯობესებული გრუნტის გზები გასწვრივი მცენარეული ნარგავებით

გრუნტის გზები

მინდვრის და ტყის გზები

დასახლებული პუნქტები



საცხოვრებელი და სხვა ტიპის ნაგებობები

გამორჩეულად ცეცხლგამძლე ნაგებობები

ცალკე მდგომი კარმიდამოები

ეკლესიები

Անցում առաջադրանքի՝ I էջին

(1) 33. Բացատրե՛ք, թե 1980-ական թվականներից Չինաստանում ինչն է դարձել մսի սպառման նման սրընթաց աճի պատճառ:

Մսի սպառումը տարբեր երկրներում

միջին տարեկան սպառումը մեկ շնչի հաշվով



(1) 34. Ո՞ր մշակաբույսից պատրաստված ապրանքի արտադրությունն է պատկերված քարտեզի վրա (այդ արտադրանքի գովազդն արգելված է աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ Վրաստանում):

Արտադրության ծավալն ըստ երկրների 2022 թ.



(2) 35. Համաձայն դիագրամում ներկայացված տեղեկատվության՝ 2020 թվականին 100 000 մարդու հաշվով մաշկի քաղցկեղի ախտորոշմամբ առաջատարը Ավստրալիան է: Ըստ գիտնականների՝ աշխարհագրական ո՞ր գործոնն է բոլորից շատ ազդում այս իրավիճակի վրա: Բացատրե՛ք պատասխանը:



(2) 36. Որոշե՛ք երկու հիմնական աշխարհագրական գործոնները, որոնք պայմանավորել են լուսանկարում պատկերված ճահճային էկոհամակարգի առաջացումը: Բացատրե՛ք պատասխանը:



(4) 37. Վերլուծե՛ք քարտեզը և պատասխանե՛ք հարցերին.



Ք. Բլանտայր (Շոտլանդիա)



Անցում առաջադրանքի՝ II էջին

(1) 37.1. Ո՞ր հետազոտողի ճանապարհորդական երթուղիներն են պատկերված քարտեզի վրա:

ա) Վասկո դա Գամայի,
բ) Դեյվիդ Լիվինգսթոնի,
գ) Իբն Բատուտայի,
դ) Մունգո Պարկի:

(1) 37.2. Հետազոտողի հայտնաբերած աշխարհագրական ո՞ր օբյեկտն է նա կոչել իր երկրի թագուհու անվամբ:

ա) Կենտրոնական Աֆրիկայում հայտնաբերած լիճը,
բ) Հարավային Աֆրիկայում հայտնաբերած լեռնաշղթան,
գ) Արևմտյան Աֆրիկայի ափերի մոտ հայտնաբերած կղզին,
դ) Զամբեզի գետի վրա հայտնաբերած ջրվեժը:

(2) 37.3. Աֆրիկայի ո՞ր տարածաշրջաններում է ճանապարհորդել հետազոտողը:

Անցում առաջադրանքի՝ I էջին

(4) 38. Վերլուծե՛ք տեղեկատվությունը և պատասխանե՛ք հարցերին.

Միջազգային իրավունքում ամրագրված են պետական սահմանների անխախտելիության և ազգային փոքրամասնությունների ինքնորոշման սկզբունքները: Առաջինն ապահովում է պետությունների տարածքային ամբողջականությունը, իսկ երկրորդը՝ պետությունում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանումը: Շոտլանդիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների միջև լարված բանակցությունների արդյունքում 2014 թվականին որոշվեց անցկացնել Շոտլանդիայի անկախության հանրաքվե՝ հետևյալ հարցով. «Պե՞տք է դառնա արդյոք Շոտլանդիան անկախ պետություն»: (Արդյունքները ներկայացված են դիագրամ 1-ում): Նույն ցանկությունը հայտնեց նաև Կատալոնիայի կառավարությունը: 2014 թվականին Իսպանիայի Սահմանադրական դատարանը հանրաքվե անցկացնելու հարցը ճանաչեց հակասահմանադրական, չնայած դրան, 2017 թվականին Կատալոնիայում անցկացվեց հանրաքվե՝ հետևյալ հարցով. «Ցանկանո՞ւմ եք արդյոք, որ Կատալոնիան դառնա անկախ պետություն՝ հանրապետական կառավարմամբ»: (Արդյունքները ներկայացված են դիագրամ 2-ում):





(2) 38.1. Բերե՛ք երկու փաստարկ, ինչի պատճառով Շոտլանդիայի հանրաքվեն կարող է համարվել լեգիտիմ:

(2) 38.2. Բերե՛ք երկու փաստարկ, ինչի պատճառով Կատալոնիայի հանրաքվեն կարող է համարվել ոչ լեգիտիմ:

(8) 39. Ժամանակակից աշխարհի հիմնական մարտահրավերներից է էներգետիկ ռեսուրսներով ապահովումը: Էներգետիկ ռեսուրսների շուկայում գների և մատակարարումների տեսանկյունից անկայուն իրավիճակ է ձևավորվել: Ստորև տրված է տեղեկատվություն, համաձայն որի կարող ենք գնահատել 2022 և 2023 թվականներին Եվրոպական միության բնական գազի շուկայում ստեղծված իրավիճակը: Վերլուծե՛ք տեղեկատվությունը և պատասխանե՛ք հարցերին:

Դեպի Եվրամիություն բնական գազի փոխադրման այլընտրանքային ուղիներ (2023 թվական)





* Նորվեգիայի տվյալները 2022 թվականին ներառված էին այլ երկրների տվյալների մեջ

Անցում առաջադրանքի՝ II էջին

(1) **39.1.** Համաձայն B դիագրամի՝ 2022 թվականին քանի՞ տոկոս է կազմել բնական գազի արտահանումը Ռուսաստանից ԵՄ երկրներ:

ա) 5%

բ) 8%

գ) 13%

դ) 18%

(2) **39.2.** Բնական գազի փոխադրման ո՞ր տեսակի տվյալներն են պատկերված յուրաքանչյուր դիագրամում:

(1) **39.3.** Ի՞նչ տվյալ են ցույց տալիս դիագրամների յուրաքանչյուր սյունակի վրա նշված տոկոսները:

(1) **39.4.** Բացատրե՛ք, թե ինչով է պայմանավորված 2023 թվականին Ռուսաստանից բնական գազի մատակարարման կտրուկ կրճատումը 2022 թվականի համեմատ:

(1) **39.5.** Համաձայն A դիագրամի՝ 2022 թվականին որ երկո՞ւ երկրներն էին Եվրամիության համար բնական գազի մատակարարման առաջատարները:

(2) **39.6.** B դիագրամում Նորվեգիայի 2022 թվականի տվյալները ներառված էին մյուս երկրների տվյալների ամբողջության մեջ: Ելնելով դիագրամը կազմելու սկզբունքից, քանի՞ տոկոսից պակաս կլիներ Նորվեգիայի ցուցանիշը 2022 թվականին: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Անցում առաջադրանքի՝ I էջին